

12.06.2008

Այցելություն Կոտայքի և Գեղարքունիքի մարզեր

Շարունակելով արտագնա հանդիպումների շարքը՝ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի և Շահառուների խորհրդի ներկայացուցիչներից բաղկացած խումբը այցելեց Ջրից դեպի շուկա բաղադրիչի շրջանակներում հիմնադրված որոշ ցուցադրական տնտեսություններ:

Առաջին այցելությունը **Կոտայքի մարզի, Առինջ համայնք** էր, որտեղ գտնվում են Ռոզա Ծառուկյանին պատկանող գյուղատնտեսական ֆերմաները: Էյ-Սի-Դի-Այ/ՎՕԿԱ-ի կողմից հիմնված ցուցադրական տարածքում տնկված են Ռուսաստանի Դաշնությունից (Կրասնոդարի երկրամասի Կրիմսկի փորձարարական-սելեկցիոն կայան) ներկրված ծիրանենու վեց ամսեկան, ցածրաճ պատվաստակալների վրա պատվաստված 60 տնկիներ: Պատվաստացուները տեղական «Երևանի» և «Սաթենի» սորտերն են: Համեմատության համար, ներկրված տնկիների հարևանությամբ զուգահեռ տնկվել են նույն սորտերի տեղական 10 տնկիներ՝ պատվաստված սերմնային պատվաստակալի վրա: Ֆերմերն իր կողմից կազմակերպել է տնկման աշխատանքները և պատասխանատու է տնկիների մշակության և անվտանգության ապահովման համար:

Երկրորդ կանգառը եղավ **Կոտայքի մարզի, Ալափարս համայնք**, մի ֆերմա, որը մշակում է ֆերմեր Տիգրան Ղազարյանը: Բավականին ուշագրավ և իր բնույթով Հայաստանում եզակի այս այգին Տիգրան Ղազարյանը մշակում է շուրջ 7 տարի: Խոսքը ազնվամորու ընդլայնված արտադրության մասին է: Սկսելով մշակությունը 1000մ²-ի վրա, այժմ նա մշակում է շուրջ 4 հա ազնվամորի և ցանկանում է ընդլայնել մշակության տարածքը: Ողջ մշակությունն իրականացվում է օրգանական եղանակով, ֆերմերը անցել է սերտիֆիկացիայի անցումային փուլը և այս տարի կստանա «Օրգանական արտադրանք»-ի հավաստագիր:



*Տիգրան Ղազարյան, ֆերմեր;
Սերգեյ Մելոյան, ՀՄՀ-Հայաստանի
ՋրԾ ծրագրի մասնագետ; Աշոտ
Ռսկանյան, ՇԽ անդամ; Արայիկ
Հովհաննիսյան, ՇԽ անդամ; Արա
Հովսեփյան, ՀՄՀ-Հայաստան
ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ*

Ֆերմերին պատկանող ցուցադրական տարածքին Ջրից դեպի շուկա ծրագրի շրջանակներում տրամադրվել են ԱՄՆ-ից ներկրված ազնվարու (սև և կարմիր սորտեր) և մոշի (անփուշ սորտ) 200 արմատակալներ, որոնք ֆերմերը, հիմնվելով իր նախորդ տարիների փորձի վրա, բազմացնելու է և օգտագործելու առկա տարածքներում վերատնկումներ կատարելու, ինչպես նաև՝ հիմնվող նոր տարածքներում տնկումներ կատարելու համար: Ի դեպ, ներկրված հատապտուղները սորտեր են (պետք է նշել, որ այժմ Հայաստանում չկա ազնվամորու և մոշի որևէ սորտ, ֆերմերները տնամերձերում, փոքր տարածքների վրա մշակում են այդ հատապտուղների վայրի աճող ձևերից վերցված խոշորապտուղները):

Վերջին այցելությունը **Գեղարքունիքի մարզի Ծովագարդ համայնք** էր: Յուցադրական տարածքը պատկանում է Հայրապետ Հայրապետյանին: Սա ապակեպատ ջերմատուն է, որի 750մ² տարածքում իրականացվում է սածիլանոցների բարեկարգում և բանջարային մշակաբույսերի (պոմիդոր, վարունգ, բադրիջան, տաքդեղ, ծաղկակաղամբ, կաղամբ) ցանք շաղաքան եղանակով և թաղարներում: Նպատակն է՝ Հայաստանի լեռնային գոտում հիմնել բանջարային մշակաբույսերի սածիլների արտադրության կենտրոն, որը կարող է սածիլներ արտադրել և մատակարարել ոչ միայն լեռնային, այլև նախալեռնային և հարթավայրային տարածքների բանջարեղեն արտադրող տնտեսություններին: Դա հիմնավորվում է այն հանգամանքով, որ լեռնային տարածքներում աճեցված սածիլները համեմատած հարթավայրում աճեցվածների, առողջ են, աչքի են ընկնում բարձր դեղնացկանությամբ կյանքի անբարենպաստ պայմանների նկատմամբ:

Վարունգի սածիլներ



Ֆերմերը պատասխանատու է սածիլների մշակության ժամանակին և որակով կատարման, ոռոգման, պարարտացման, վնասատուների դեմ պայքարի կազմակերպման համար: Այս ցուցադրական տնտեսությունում ակնատես եղանք ոռոգման մի հետաքրքիր նորամուծության: Խոսքը ցածր ճնշման տակ աշխատող, շարժական միկրոանձրևացման Բուս ոռոգման համակարգի մասին է, որն օգտագործվում է սածիլների և այլ փոքր ջերմոցային մշակաբույսերի ոռոգման համար և ֆերմային է տրամադրվել Ջրից դեպի շուկայի շրջանակներում: Այն միաժամանակ կամ առանձին-առանձին կարող է ոռոգել 2 բաժին՝ 1.2մ լայնությամբ և 8.5մ երկարությամբ, իդեալական է

սածիլների ոռոգման համար: Ջերմոցում պոմիդորը և վարունգը ոռոգվում են երկու փողրակների միջոցով, որոնք ամրացված են համակարգին և ապահովում են մակերեսային ոռոգում: Բացի դրանից, սայլը կարելի է վերափոխել և օգտագործել ջերմոցում մատուցարաններ և այլ գործիքներ տեղափոխելու համար:



Շարժական միկրոանձրևացման Բուժ ոռոգման համակարգ

Սայլի և շարժական երկթև բումերի կառուցման աշխատանքները իրականացվել են պարզ և համեմատաբար ցածրարժեք պայմանագրով (110 000 դրամ): Ջրի ներտնտեսային կառավարման բաղադրիչի շրջանակներում գնվել են շաղափները և սարքավորումները (45000 դրամ): Ֆերմերը աջակցել է տեղադրման աշխատանքներին և պատասխանատու կլինի համակարգի պահպանման համար: